նէն առնել զի մուծցէ Օրինակն գանգատի և պատասխանոյ դատախազին ընդ յապարանս դատաւորաց հայոց, և անտի դացի վճիռ և դատաստան իշխանաց աշխարհին հայոց, և ամենայն տուն դատաստանաց պարտեն տալ նոցա ազատութիւն ըստ խնդրուածոց նոցա և յապա զոր ինչ վճիռ 'ի յապարանէն և դատաւորաց հայոց ելցէ, նայ լիցի յետին վճիռ և նովաւ բաւականասցեն։

ԳԼՈՒԽ ՃԽԳ.

Ամենայն ոք ընակեալք 'ի ներքոյ հովանաւորութեան հայոց՝ ազատապէս կարող է գանգատել ընդդէմ ամենայն արանց, եթէ նախարարին տանուտէրի խորհրդակցի դատաւորի, իշխանի և կամ հասարակ ժողովրդոց, դատախազն պարտէ պատասխանել գանգատողին, և ընդունիլ վճիռս դատաստանին 'ի վերայ իւր ըստ Օրինօք։

ԳԼՈՒԽ ՃԽԴ.

Ամենայն ոք որում պատասխանէ ընդ դէմ գանգատողին պարտ է երդմնուլ 'ի վերայ բանին գրեցելոյ իւրոյ, այսինքն թէ պատասխանն որ գրեաց արդար է։